

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2019-6-6-Ա

ք. Երևան

08.07.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հուլիսի 8-ի նիստում քննարկեց 2019 թվականի հունիսի 10-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ adp Gauselmann GmbH (Merkur-Allee 1-15 32339 Espelkamp, DE) ընկերության բողոքը (IR1350303) «Centurio» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հիմք ընդունելով Ապրանքային նշանների մասին ՀՀ Օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասը Գործակալությունը որոշում է՝ ուժի մեջ թողնել մերժման մասին որոշումը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում որպես ապրանքային նշան հայտարկված բառային ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «CENTRINO» և «ЦЕНТРИНО» (Ինթել Քորփորեյշն, Դելավերի նահանգ INTEL CORPORATION, a Delaware corporation 2200 Mission College Boulevard, Santa Clara, California 95052-8119, USA US N 7532, 30.09.2003, N 7512, 12.09.2003) բառային ապրանքային նշանների առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» 121-րդ և 122-րդ կետերով սահմանված հիմքերով բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները, որոնք ունեն ձայնային նմանություն, որոնց նմանությունը որոշվել է ձայնային հատկանիշներով: Չնայած հակադրված նշաններից մեկը գրված է կիրիլիցայով, այնուամենայնիվ դրանք զուգորդվում են

հայտարկված ապրանքային նշանի հետ իրենց հնչողությամբ, այն է՝ արտասանելիս համընկնում են «ցեն» սկզբնամասով: Անդրադառնալով կրկնական փորձաքննություն խնդրարկելու մասին դիմումում նշված հայտատուի նախաձեռնությամբ խնդրարկված ապրանքների սահմանափակման առաջարկին, տեղեկացնում ենք, որ վերոհիշյալ գործողությունը իրականացնում է ՄՍՀԿ Միջազգային բյուրոն՝ ներկայացված MM6 ձևաթղթի հիման վրա:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ կոլեգիան հաշվի առնելով այն փաստը, որ հայտատուն կրճատել է խնդրարկվող 9-րդ դասի ապրանքների ցանկը կարծում է որ այդ ապրանքների համար ապրանքային նշանի գրանցումը սպառողին մոլորության մեջ չի գցի արտադրողի վերաբերյալ հարցում: Նաև նշված ապրանքների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանը չի կարող համարվել շփոթելու աստիճան հակադրված ապրանքային նշանի հետ: Հետևաբար բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

Բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «Centurio» (IR1350303) ապրանքային նշանը գրանցել բողոքում նշված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ